ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2013թ. թիվ 88-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 132-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով եւ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2013թվականի մայիսի 22-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն համաձայնություն տալու մասին» N 410-Ա որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի հուլիսի 27-ի թիվ 132-Ա որոշման 1-ին կետը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պաշտոնների անձնագրերը (ծածկագրեր՝ 65-2.2-36, 65-3.1-22, 65-3.1-23, 65-3.1-24, 65-3.1-25)՝ համաձայն թիվ 1-5 հավելվածների:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. մայիսի 30
ք.Վանաձոր